

Անգլերեն Լեզվի Փորձառության Մակարդակ

Փորձառության մակարդակը համընկնում է Կալիֆորնիայի Անգլերեն Լեզվի Զարգացման (ELD) Չափանիշներին: Դրանք կազմում են ուղի Անգլերեն Լեզվի Դասարանի Մակարդակի Զարգացման Չափանիշների համար: Բացի դրանից, ELD յուրաքանչյուր մակարդակ ստեղծվում է նախկին մակարդակի վրա:

Տարրական դպրոցի Անգլերեն լեզվի սովորողներից սպասվում է բարձրացնել ELD մակարդակը ամեն տարի: Միջնակարգ դպրոցի Անգլերեն լեզվի սովորողները նշանակվում են Անգլերենը որպես երկրորդ լեզվի (ESL) դասերին, որը համապատասխանում է իրենց ELD մակարդակին: Նրանցից սպասվում է առաջադիմել մեկ ESL մակարդակ յուրաքանչյուր կիսամյակ: Ցացում տրվածները այն բացատրություններն են, թե ինչ կարող են անել աշակերտները յուրաքանչյուր ELD մակարդակի համար:

ELD 1 - Սկզբնական. Աշակերտները կարող են ցուցադրել քիչ կամ ոչ ընկալունակ Անգլերենի կարողություններ: Բանավոր կամ գրավոր աշխատանքը սովորաբար սահմանափակ է: Հաճախ պատահող սխալները դարձնում են հաղորդակցությունը դժվար:

ELD 2 - Վաղ միջանկյալ. Աշակերտները շարունակում են ստեղծել ընկալունակ և գործուն Անգլերենի մակարդակ: Բանավոր կամ գրավոր աշխատանքը սովորաբար սահմանափակ է ֆրազաների, հայտարարությունների և հարցերի համար: Հաճախ պատահող սխալները կարող են միջամտել հաղորդակցությանը:

ELD 3 - Միջանկյալ. Աշակերտները սկսում են կազմել իրենց Անգլերեն լեզվի կարողությունները, բավարարելու հաղորդակցության և սովորելու պահանջները: Բանավոր կամ գրավոր աշխատանքը սովորաբար ծավալվում են նախադասությունների, պարագրաֆների, հայտարարությունների և հարցերի կողմից:

ELD 4 - Վաղ առաջադեմ. Աշակերտները սկսում են միացնել իրենց Անգլերենի լեզվի էլեմենտները բարդ, իմացական դրություններում: Բանավոր կամ գրավոր աշխատանքը բնորոշվում է ավելի շատ խնամքով կատարված քննախոսության միջոցով, լրիվ զարգացած պարագրաֆներով և շարադրություններով:

ELD 5 - Առաջավոր. Աշակերտները պատասխանում են Անգլերեն, օգտագործելով հարուստ բառապաշար սոցիալ և ակադեմիական դատողության համար, համագործակցելու դրա նշանակությունը և դիմելու գաղափարը բովանդակության մեջ:

Ուս. շրջանի նպատակն է բոլոր ELs համար ձեռք բերել բարձր կարգի ակադեմիական Անգլերենի կարողություն և բավարարել դասարանի մակարդակի չափանիշները շրջանով մեկ, որքան հնարավոր է արագ: Բոլոր Անգլերեն սովորողներից սպասվում է կատարել առաջադիմություն, պահանջելով Անգլերեն և տրվում է մուտք դասարանի մակարդակի ծրագրի համար: Աշակերտները, ովքեր չեն կատարում այդ համապատասխան առաջադիմությունը, տրվում են հնարավորություններ ստանալու միջանկյալ ծառայություններ:

Los Angeles Unified School District
Instructional Services
Language Acquisition Branch
(213) 241-5582

Revised June 2008

12435ag_Translated by the LAUSD Translations Unit (Armenian)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱՆԳԼԵՐԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾՆՈՂԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Ծրագրի Նպատակները և Նկարագրությունը

Երբ Տան Լեզվի Քննումը (HLS) հաստատում է պոտենցիալ Անգլերեն լեզվի սովորողին, դպրոցը տեղեկացնում է ծնողներին Գլխավոր Պլանի ուս. ծրագրերի նախընտրությունների, տեղադրման մասին և իրենց իրավունքների մասին, պահանջելու իրավաթողություն Երկընտրական Ծրագրերի համար:

Կալիֆորնիայի Անգլերեն Լեզվի Զարգացման Քննությունը (CELDT) ղեկավարվում է սկզբնական ընդունելության 30 օրվա ընթացքում, որոշելու լեզվի դասակարգումը և նախընտրությունը EL ծառայությունների համար: Երբ ճանաչվում է որպես EL, հիմնված CELDT արդյունքների վրա, հիմնական լեզվի գնահատումը կատարվում է սկզբնական ընդունելության 45 օրվա ընթացքում: Դպրոցը տեղյակ է պահում ծնողներին սկզբնական CELDT մասին և հիմնական լեզվի քննության արդյունքների մասին և հաստատում է ծրագրի տեղավորման հարցը: Այդ ժամանակ ծնողներին տրվում է հնարավորություն պահանջելու ծրագրի տեղավորման փոփոխություն:
Հետևաբար, ELs գնահատվում են ամեն տարի CELDT կողմից, չափելու (ELD) Անգլերեն Լեզվի Զարգացման առաջադիմությունը: Ծնողներին ամեն տարի տեղյակ են պահում իրենց երեխայի քննության արդյունքների մասին և ծրագրի տեղավորման հարցի մասին: Ժողովի պահանջը, որ կատարվում է դիրեկտորի հետ, կարելի է կատարել քննարկելով երեխայի արդյունքները, ծրագրի տեղավորման հարցը կամ ծրագրի այլ նախընտրությունները:
Ստեղծվել են Հիմնական Պլանի ուս. ծրագրերը, ապահովելու, որ ELs պահանջեն Անգլերեն Լեզվի լրիվ ունակություն և բավարարեն դասարանի չափանիշները որքան հնարավոր է արագ: Դրանք նկարագրված են ցածում:

Կառուցվածքային Անգլերենի Ուժեղացնող (SEI) Ծրագիր

ELs, որն ունի ավելի քիչ, քան հիմնական սահմանություն Անգլերեն լեզվում (ELD մակարդակ 1-4 կամ ESL մակարդակ 1-2), տեղավորվում են SEI ծրագրում:
SEI ծրագիրը տալիս է ուսուցում Անգլերեն, ներառյալ. հիմնական ELD, հիմնական լեզվի օգնություն և Հատուկ Ստեղծված Ակադեմիական Ուսուցում Անգլերեն (SDAIE), բավարարելու դասարանի պահանջները: ELs խմբավորվում են Անգլերենի փորձառության մակարդակով ամենօրա ELD/ESL ուսուցման համար: Երկրորդական ELs in Intro ESL կամ ESL 1 կարելի է ստանալ ESL նախնական դասեր մաթեմատիկայից, գիտությունից և պատմությունից իրենց առաջին տարվա ընթացքում, նրանց օգնելով դասարանի մակարդակի դասերը հաջորդ տարվա համար: Սա կուշացնի մուտքը դասարանի մակարդակի չափանիշների համար, երբ աշակերները սովորում են Անգլերերն:

Հիմնական Անգլերենի Ծրագիր

ELs, որոնք չափավոր են Անգլերենից (ELD level 5) տեղավորվում են Անգլերենի Հիմնական Ծրագրում: Այս ծրագիրը տալիս է դասարանի մակարդակին հավասար ուսուցում Անգլերեն և դա ստեղծված է բնիկ Անգլերեն խոսողների համար: ELs շարունակում են ստանալ լրացուցիչ ուս. աջակցություն, որպեսզի բավարաեն այն պահանջները և դասակարգվեն որպես Անգլերենից սահուն:

Նշում. Ծնողները իրավունք ունեն պահանջելու Հիմնական Ծրագիր իրենց երեխայի համար ուս. տարվա ընթացքում: Այս պահանջը պետք է կատարվի գրավոր:

Երկընտրական Ծրագրեր

1. Հիմնական Երկլեզվի Ծրագիր. Երկլեզու ուսուցիչները օգտագործում են հիմնական լեզուն, սովորեցնելու դասարանի մակարդակի ակադեմիական առարկաներ: ELD սովորեցվում է ամեն օր: Երբ աշակերտները առաջադիմում են Անգլերենից, դրա ուսուցումը ավելանում է ակադեմիական առարկաներում:
2. Կրկնակի Լեզվի Ծրագիր. ELs և Անգլերենից հմուտ աշակերտները ստանում են ուսուցում երկու լեզվով, ստեղծելու ակադեմիական կարողություն Անգլերենից և հիմնական լեզվից, որ սկսվում է մանկապարտեզից ամենաքիչը վեց տարի:

Իրավաթողության Ընթացք

Ծնողները պետք է պահանջեն Ծնողի Բացառության Իրավաթողություն երեխայի համար, ով ընդունվում է Հիմնական Երկլեզվի ծրագրում կամ Կրկնակի Լեզվի ծրագրում: Ծնողի Բացառության Իրավաթողությունը պետք է գործի ոչ ուշ քան 10 օր սկզբնական 30 օրվա SEI տեղավորումից հետո կամ 20 ուս. օր այն ժամանակից, երբ ծնողական իրավաթողությունը ստացվում է դիրեկտորի կողմից: Հանգամանքներ, որտեղ ծնողի բացառության իրավաթողությունը պետք է լինի հետևյալը. ա) երեխաներ, ովքեր արդեն գիտեն Անգլերեն, բ) երեխաներ, ովքեր 10 տարեկան են կամ ավելի մեծ և գ) երեխաներ, ովքեր ունեն հատուկ պահանջներ:
Երբ 20 կամ ավելի նույն դասարանի աշակերտներ հանձնել են Ծնողի Բացառության Իրավաթողությունը, դպրոցը պետք է տա Հիմնական Երկլեզու ծրագիր: Երբ դասարանը լի է կամ երբ չկա բավականին աշակերտներ, դպրոցը պետք է տա սպասման ցուցակ դրա վերանայման համար: Ծնողներին տրվում է հնարավորություն տեղափոխելու իրենց երեխաներին մի այլ հանրային դպրոց, որտեղ առաջարկվում է հետևյալ ծրագիրը (Educational Code 310):

Եթե ավելի քիչ քան 20 Ծնողի Բացառության Իրավաթողություն ունեցող աշակերտները լինում են դասարանի մակարդակով, դպրոցը պետք է հաստատի բազմաթիվ աշակերտներով դասարան:

Նշում. Ծնողները պետք է ամեն տարի պահանջեն Ծնողի Բացառության Իրավաթողությունը անձամբ, շարունակելու ընդունելությունը Հիմնական Երկլեզվի կամ Կրկնակի լեզվի ծրագրում:

Դիմումի Ընթացք

Չի տրվի Ծնողի Բացառության Իրավաթողություն, մինչև դպրոցի ղեկավարությունը չորոշի, որ Երկընտրական Ծրագիրը, որն առաջարկվել է դպրոցում, օգուտ չի տա աշակերտին:
Եթե Ծնողի Բացառության Իրավաթողությունը մերժվում է, ծնողներին պետք է գրավոր տեղեկացնել մերժման ձևի պատճառը և դիմումի գործընթացը: Ծնողները կարող են դիմել, օգտագործելով հետևյալ երեք քայլերը.
Քայլ 1. Դիմում դպրոցի դիրեկտորին
Քայլ 2. Դիմում տեղի ուս. բաժնի վարիչին:
Քայլ 3. Դիմում գլխավոր ուսումնական պաշտոնյային:

Նշում. Անհատականացված Կրթության Ծրագրի (IEP) թիմը որոշում է յուրաքանչյուր աշակերտի տեղավորման հարցը, որ ստանում է Հատուկ Կրթության ծառայություններ, հաշվի չառնելով լեզվի փորձառությունը: IEP որոշումը չի պահանջում Ծնողի Բացառության Իրավաթողություն: